



# ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 ԳԵԿՏԵՄԲԵՐԻ

2023 թ.

№ 17 (1115)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
Երկշաբաթաբեր • Իրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐԻՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## Նախադպրոցական կրթության զարգացման խնդիրները՝ ուշադրության կենտրոնում



ԿԳՄՍ նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում դեկտեմբերի 7-8-ն անցկացվեց նախադպրոցական ուղրտի զարգացման խնդիրներին նվիրված երկօրյա աշխատաժողով՝ «Ես կարևոր եմ» խորագրով:

Աշխատաժողովը բացեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Նա անդրադարձավ նախադպրոցական կրթության ուղրտում տեղի ունեցող բարեփոխումներին, առկա խնդիրներին և նրանց լուծումներին ուղղված քայլերին, ժամանակակից մանկավարժական մոտեցումներին: Նրա դիտարկմամբ՝ միջավայրի ապահովվածությունն ու համապատասխանությունն իրականացնող գործընթացներում որոշիչ են, և հատկապես նախադպրոցականների համար միջավայրը մեծ ազդեցություն ունի:

Ա. Սվաջյանը խոսեց նախադպրոցական ուղրտի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների մասին՝ ընդգծելով, որ մինչև 2026 թվականը կկառուցվի, կվե-

րակառուցվի կամ կհիմնանորոգվի 500 մանկապարտեզ՝ չափանիշներով ժամանակակից ստանդարտներին համապատասխան: Դրանք պետք է ապահովեն առավել բարձր որակի կրթության արդյունավետություն:

Նախարարի տեղակալը հանգամանորեն անդրադարձավ նախադպրոցական կրթությունն առավել հասանելի և մատչելի, ինչպես նաև հետազայում պարտադիր դարձնելու խնդիրներին:

«Պետք է հնարավորություն տալ բոլոր երեխաներին ընդգրկվելու նախադպրոցական կրթության մեջ», -ասաց նախարարի տեղակալը՝ նկատելով՝ պետք է ամեն ինչ անել, որպեսզի երեխաների տարբեր խմբերի համար հասանելի լինի նախադպրոցական կրթությունը, անապահով մասի համար էլ հետազայում ապահովել անվճար կրթությունը»:

Նախարարի տեղակալը կարևորեց կրթության բովանդակությունը, այդ համատեքստում խոսեց նախադպրոցական

և հանրակրթության ուղրտում ներդրվող նոր չափորոշիչների, մանկավարժների կարողությունների զարգացման մեխանիզմների և գործընթացի փոխկապակցվածության, կրթական տարբեր մակարդակների միջև անցումն ապահովելու մասին՝ ընդգծելով՝ նոր չափորոշիչները պետք է հսկայական փոփոխություններ բերեն այս ուղրտին:

Ա. Սվաջյանը նաև կարևորեց 5 տարին մեկ մանկավարժների պարտադիր վերապատրաստման անհրաժեշտությունը, որը նրանց հնարավորություն է տալիս զարգացնել իրենց կարողությունները, ապա դիմեց մանկավարժներին խնդիրները շատ են, և դրանք պետք է լուծենք ձեր միջոցով ու աջակցությամբ:

ՀՊՄՀ ղեկավար Սրբուհի Գևորգյանը համալսարանի համակարգի անունից ողջունեց ներկայից և կարևորեց երկօրյա աշխատաժողովի նախաձեռնությունը:

«Մա այն ուղրտն է, որով պայմանավորված է երկրի անվտանգությունը, գործունեության արդյունավետությունը, քաղաքացու արժեքամակարգի կերտումը, -ասաց ղեկավարը: - Ահա ինչու այս ուղրտում ցանկացած ներդրում վաղվա օրվա գրավականն ապահովող գործընթաց է»:

Սրբուհի Գևորգյանն ուրախությամբ նշեց, որ աշխատաժողովում Կառավարության, ուղրտի մասնագետների, ՀՊՄՀ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի կողմից շեշտադրվում են հարցեր, որոնք անհապաղ լուծումներ են պահանջում: Ուկտորը փաստեց, որ առայժմ Հայաստանում չկան հետազոտական այնպիսի տվյալներ, որոնք պատասխանեն մի շարք հարցերի, այդ թվում՝ ո՞վ է մեր մանկության սուբյեկտը, ի՞նչ մեթոդական գործիքակազմ ունենք, ո՞րն է նրանց համար սոցիալական միջավայրի ստեղծման այն հենքը, որի առկայության պայմաններում կարելի է

խոսել նախադպրոցական կրթական ուղրտի զարգացման մասին:

Սրբուհի Գևորգյանը խոսեց երեխայի վիզուալիզացիայի, էկրանից կախվածության մասին, որոնք շատ հաճախ նյարդահոգեբանական լուրջ խնդիրներ են առաջացնում, նաև կրթական հաստատություն-ծնող համագործակցության մասին: Միաժամանակ իր մտահոգությունն արտահայտեց առողջապահական համակարգի վերջին տվյալների շուրջ, ըստ որի, ՀՀ-ում 56.4 տոկոս երեխաներն ունեն զարգացման լուրջ խնդիրներ:

Խոսելով տեխնոլոգիաների զարգացման և կրթության ուղրտում նրանց կարևորության ու անհրաժեշտության մասին՝ նեկտորը հարցադրում արեց՝ պետք է հասկանալ, թե տեխնոլոգիաների կիրառումը որքանով է պետք նախադպրոցական տարիքի երեխաների համար:

Համալսարանի ղեկավարի կարծիքով յուրաքանչյուր երեխա պետք է պարտադիր հաճախի նախադպրոցական հաստատություն, և այդ դեպքում կունենանք սերունդ, որը գերազանցելու է նախորդ հարյուրամյակների սերունդներին:

«Վաղ տարիքի կրթությունը կարևոր է և՛ երեխաների, և՛ ծնողների, և՛ հասարակության համար», -ասաց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Սիլվա Մեստրոնին: Հենց այս կազմակերպության աջակցությամբ էլ իրականացվում էր «Ես կարևոր եմ» խորագրով աշխատաժողովը: Նա ընդգծեց՝ հետազոտությունները ցույց են տվել՝ ինչքան կարևոր է ներդրումներ անել նախադպրոցական տարիքի երեխաների կրթության մեջ:

«Երբ մենք առաջին տարիներին երեխային չտրամադրենք զարգացման հնարավորություններ, նրանք կկորցնեն շատ բան, -ասաց Սիլվա Մեստրոնին: - Այս պահին աշխարհում տասնյակ միլիոն ե-

>2

## ԿՆՔՎԵՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻ

Մանկավարժական համալսարանի և Տավուշի մարզի 4 ավագ դպրոցի միջև դեկտեմբերի 12-ին կնքվեց համագործակցության պայմանագիր:

Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև հանրակրթության ուղրտի կրեդիտային համակարգի շրջանակներում կրեդիտների ճանաչման մասին փաստաթուղթը ստորագրեցին ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը և Նոյեմբերյանի, Բերդի, Իջևանի և Դիլիջանի ավագ դպրոցների տնօրենները:

Կրեդիտային համակարգի ներդրման նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի միջև զարգացնել կրթական միասնական միջավայր, առավել դյուրին դարձնել սովորողների անցումը հանրակրթությունից այլ կրթական համակարգ, միջնակարգ կրթության երրորդ աստիճանում և բուհերում ուսումնական գործընթացների կազմակերպման միջև խթանել համադրելիությունը:

«Միջնակարգ կրթության կրեդիտա-

յին համակարգի ներդրման և գործարկման կարգ»-ի համաձայն՝ պայմանագիրը հնարավորություն կտա նաև ուսումնառության արդյունքների հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգը համապատասխանեցնել ՀՀ գործող կրթական օրենսդրության միջազգային կրթական չափանիշներին, նպաստել սո-

վորողների մասնագիտական կողմնորոշմանը և հետաքրքրությունների զարգացմանը:

Գործընթացը համակարգում է «ԿՆՔՎԿ» հիմնադրամը:

Պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը կարևորեց ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությունն ու հայաստանյան մի



շարք բուհերի մասնակցությունը՝ կրեդիտները փոխանաչելի և փոխանցելի դարձնելու գործընթացին:

ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորը կարծում է, որ վաղուց ժամանակն է կարգավորել դաշտը. կրեդիտների ներդրումը հնարավորություն կտա խոսափել նույնաբովանդակ, ոչ էական տարբերություններով առարկաների կրկնությունից՝ հանրակրթական ուսումնական հաստատության կողմից բուհին փոխանցած կրեդիտների շնորհիվ: Նաիրա Սաֆարյանը վստահ է, որ պայմանագիրը երկուստեք փոխշահավետ և նպատակային կլինի:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Չկա, կյանքն ազգին և հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկություն չկա աշխարհում:  
Գարեգին ՆՇԴԵԸ

# Մասնակցեցին միջազգային գիտագործնական կոնֆերանսին

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը ՀՀ Ռուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանն ու Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Լիլիա Բալասնյանը Մոսկվայում մասնակցեցին միջազգային գիտագործնական կոնֆերանսին:

Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի (RUDN) նախաձեռնությամբ անցկացվող ծեռնարկին մասնակցում էին գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ ՌԴ-ից, Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից, Գերմանիայից, Իտալիայից և այլն:

«Երկ-, բազմա-, տրանլեզվություն և լեզվաբանական կրթություն» խորագրով 9-րդ միջազգային գիտագործնական կոնֆերանսն այս տարի նվիրված էր ռուս համակարգագետ, RUDN համալսարանի պրոֆեսոր Գեոնգի Մելնիկովի և երկլեզու գրող Զինգիդ Լյծմատովի 95-ամյակին:

ՀՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարիամ Իսպիրյանը ներկայացրեց Լիլիա Բալասնյանի հետ համահեղինակած «Հայ-ռուսական երկլեզվության զարգացման պատմությանը ՀՀ-ում» թեմայով զեկուցումը:

Նա իր ելույթում ընդգծեց՝ լեզվական շփումները 21-րդ դարում գիտնականների կողմից ընկալվում է որպես բազմակողմ երևույթ: Ըստ բանախոսի, թեմայի ու-



սումնասիրությունը հնարավոր չէ առանց հաշվի առնելու «լեզվի իրավիճակ», «լեզվի վիճակ», «լեզվական շփում», «լեզվական երևույթ» փոխկապակցված հասկացությունների իմաստները:

Մարիամ Իսպիրյանը նկատեց՝ մեր երկրներում լեզվական կրթության ոլորտում նորարարությունները լուրջ հետաքրքրություն են առաջացնում գիտական աշխարհում. դրանք ներդրում են դասավանդման պրակտիկայում և, համապատասխանաբար, կրթության տեսության մեջ. «Կարծում ենք, որ հետախորհրդային երկրների համար զլխավոր և որոշիչ գործոնը անկախության ճանաչումից հետո լեզվական քաղաքականության փոփոխությունն էր, ինչն էլ իր հերթին առաջ բերեց այլ գործոններ ևս: Այսօր ակնհայտ է, որ լեզուներն այլ լեզուների ազդեցու-

կան կրթության պրակտիկային, զարգացմանը:

Մարիամ Իսպիրյանը բարձր գնահատեց Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի (RUDN) ունեցած ավանդը մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի ոլորտում:

Այցի շրջանակներում ՀՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Մարիամ Իսպիրյանը (RUDN), քննարկվեցին գիտական ոլորտում հնարավոր համագործակցության, պարբերականներում համատեղ տպագրության և այլ հար-



յամբ որոշակիորեն փոխվում են, սակայն չեն ձուլվում»,- նշեց Մարիամ Իսպիրյանն ու հույս հայտնեց, որ համաժողովում հնչած առաջարկները կնպաստեն լեզվա-

ցեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև փոխայցելությունների վերաբերյալ:

Մարիամ Իսպիրյան

## Ցանկացած նոր մշակույթի ծանաչում սկսվում է տվյալ լեզվի հետ ծանոթանալուց

Մանկավարժական համալսարանում մեկնարկեց «Լեզվաբանության և ռուսերենի» որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի խնդիրները» խորագրով միջազգային 4-րդ գիտագործնական կոնֆերանսը:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվող գիտագործնական ընթացակառուցված ծանաչումն էին ինչպես հայաստանյան, այնպես էլ ՌԴ առաջատար կրթական հաստատությունների՝ Մոսկվայի քաղաքային, Մոսկվայի լեզվաբանական, Մոսկվայի պետական տեխնոլոգիական, Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանների ներկայացուցիչներ, դասավանդողներ, ուսանողներ:

Ռուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը ողջունեց ծեռնարկի մասնակիցներին և նշեց, որ Մանկավարժականը մշտապես բաց է գիտության, մշակույթի, կրթության և ուսուցման ոլորտում միջազգային համագործակցության համար: Նա ընդգծեց՝ համալսարանում գնահատում և կարևորում են ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան գործընկերների փորձը: Վստահ է՝ համալսարանական կրթության ոլորտում միայն միասնական և համակարգված աշխատանքի շնորհիվ կարող են նոր բարձունքներ նվաճել:

«Կրթական համայնքում միտում կա հասկանալու լեզվաբանության և դասավանդման մեթոդների արդի խնդիրները: Դրանցով են նաև պայմանավորված ժամանակակից հասարակության և կրթական համակարգի առջև ծառայած մարտահրավերների լուծումները: Մեզ համար արժեքավոր են արտասահմանյան գործընկերների տեսակետները, որոնք արտացոլում են



նրանց վերաբերմունքը՝ մեր երկրներում տեղի ունեցող կրթական փոփոխություններին»:

Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանը հույս հայտնեց, որ գիտական հարցերի ամենամյա քննարկումները, պրոֆեսիոնալ երկխոսությունը թույլ կտան լուծել առկա խնդիրները, ոլորտում ունենալ նոր ձեռքբերումներ:

Պրոֆեսոր Ն. Դալյանը նկատում է՝ «Ժամանակակից հասարակարգում բոլոր ոլորտներում տեղի են ունենում արագացված գլոբալ գործընթացներ, որոնք իրենց հերթին փոխազդում են կրթությանը, գիտությանը, մշակույթին: Համալսարանն, ըստ նրա, այդ գործընթացում առաջնային օղակ է, որով էլ պայմանավորված են առկա փոխակերպումները»:

Նաիրա Դալյանը կարծում է, որ ժամանակակից մանկավարժական գիտության զարգացման համար միայն դասավանդվող

առարկայի իմացությունը բավարար չէ, անհրաժեշտ են նաև մի շարք հմտություններ, որոնք կնպաստեն մանկավարժական գործունեության որակական բարձրացմանը:

Ռուսաց լեզվի ուսուցիչների հայկական ասոցիացիայի նախագահ, ՀՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Լիլիա Բալասնյանը գիտագործնական մասնակիցներին փոխանցեց երևանում Ռուսական տան ղեկավար Վադիմ Ֆեֆիլովի ուղերձը: Ուղերձում մասնավորապես ներկայացված էր ռուսերենի հանրահռչակմանը միտված կառույցի լայնամասշտաբ գործունեությունը, Հայաստանում ռուսերենի ունեցած կարևոր դերակատարումը, մեր երկրում ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի հնամյա պատմությունը, Մանկավարժականի հետ գործընկերության կարևորությունը:

Լիլիա Բալասնյանը ներկայացրեց նաև իր ղեկավարած կառույցի գործունեությունը, խոսեց ռուսաց լեզվի դասա-

վանդման խնդիրներից՝ անթույլատրելի համարելով ժամանակակից լեզվաբանության ներկայիս դանդաղումը: Դոցենտ Բալասնյանը կարծում է, որ ժամանակն է խոսել ոչ թե գիտելիքից, այլ դասավանդողի հմտություններից:

«Այսօր ամբողջ աշխարհում ընթացող հասարակությունների ինտեգրացիայի գործընթացի ֆոնին արդիական է դառնում տարբեր ժողովուրդների մշակույթների և ավանդույթների ակտիվ ընկալումը: Ցանկացած նոր մշակույթի ծանաչում սկսվում է տվյալ լեզվի հետ ծանոթանալուց: Ռուսաց լեզուն ռուս մշակույթի առաջնային բաղկացուցիչ մասն է, իսկ այդ լեզվի ուսումնասիրումը՝ Ռուսաստանի հետ ծանոթության կարևորագույն մաս», -գիտագործնական կարևորությունը ընդգծելով՝ իր ուղերձում նշեց երևանում «Մոսկվայի տուն» կենտրոնի տնօրեն Վահրամ Կարապետյանը:

Նա հավելեց, որ ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի միջոցով առկա մարտահրավերների հաղթահարումը մեծամասամբ կապված է ուսումնական ծրագրերի, մանկավարժների մասնագիտական որակների, ինչպես նաև դասավանդման մեթոդների հետ:

«Լեզվաբանության և ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի խնդիրները» խորագրով միջազգային 4-րդ գիտագործնական կոնֆերանսը մոսկովյան ժողովածուն:

Մասնակիցներին իրենց գեկույցներում անդրադարձան անգլալեզու լսարանում ռուսերենի դասավանդման մի շարք առանձնահատկություններին, ժամանակակից աշխարհում միջմշակութային հաղորդակցման հոգեբանական խոչընդոտներին, ամենի ինքնակրթության ու կրթական տեխնոլոգիաներին և այլն:

Ծավալվեց շահագրգիռ քննարկում, եղավ հարց ու պատասխան:

Մարիամ Իսպիրյան



## ԼՂՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

Մանկավարժական համալսարանում պարզապատկերվեցին «Հայաստանի Հանրապետությունում ռուսաց լեզվի և գրականության լավագույն դասավանդող-2023» մրցույթի հաղթողները:

Կրթական երկու կառույցների միջև համագործակցության շրջանակներում՝ մասնակիցներին շնորհավորեցին և հավաստագրեր հանձնեցին ՀՀ Ռուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանն ու Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր Ալեքսանդր Ֆոկինը:

Այնուհետև մրցույթի եզրափակիչ փուլ անցած 8 մասնակիցներ ոլորտում ունեցած իր գիտելիքներն ու փորձը ներկայացրին նաև գործնականում: Անցկացվեց վարպետության դաս, որի արդյունքում մրցույթի 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Գայանե Հակոբյանը, 2-րդը՝ Սոնա Մկրտչյանը, իսկ մրցույթի հաղթող ճանչվեց ՀՀ Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Էվելինա Բայաթյանը:

Նույն օրը հավաստագրեր ստացան նաև «Ռուսաց լեզվի դասավանդման ինտենսիֆիկացում. ժամանակակից մեթոդիկաներ, խոսքային պրակտիկա, մանկավարժական վարպետություն» վերապատրաստման դասընթացի մասնակիցները:

# Նախադպրոցական կրթության զարգացման խնդիրները...

➤ 1 ընթացակարգ կան, որ տարբեր պատճառներով չեն հաճախում նախադպրոցական հաստատություններ, իսկ երբեմն էլ հաճախում են երեխաների՝ ցածր մակարդակ ունեցող զարգացման հաստատություններ: Այս առումով ՅՈՒՆԵՍԿՕ-ը նկատել է աշխարհում հաջողված 4 տիպի մոդելներ, որոնցում մեծ ներդրումներ են արվում:

Բանախոսը նկատեց՝ միայն ենթակառուցվածքները մշտել բավարար չէ, պետք է հաշվի առնել նրանց բովանդակային գործունեությունը: Նաև խոսեց խոցելի խմբերին նախադպրոցական հաստատություններում ավելի ակտիվ ներգրավելու անհրաժեշտության, միջգերատեսչական համագործակցության կարևորության մասին՝ հույս հայտնելով, որ երկրորդ աշխատաժողովը կդառնա վերոհիշյալ հարցերի քննարկման կարևոր հարթակ:

«ԿԶՆԱԿ» հիմնադրամի տնօրեն Արտաշես Թորոսյանը խոսեց վերջին տարիներին նախադպրոցական ոլորտում կատարվող աշխատանքների մասին, որում ներգրավված է նաև իրենց հիմնադրամի աշխատակազմը:

Խոսելով ոլորտի զարգացման հնարավորությունների մասին՝ նա նկատեց՝



դպրոցն ավելի ուժեղ կլինի, եթե նախադպրոցական հաստատությունից ավելի զարգացած երեխաներ ընդունի:

Դիմելով նախադպրոցական հաստատությունների տնօրեններին՝ ասաց, որ իրենց փորձագետներն ուսումնասիրում են

նրանց փորձը, համակարգում աշխատանքները, սակայն ոլորտի ինտենսիվ զարգացման համար ակնկալում է նրանց առավել ակտիվ մասնակցությունը:

Արտաշես Թորոսյանը կարևորեց նաև տրանսֆորմատիվ կրթությունը, որի շնոր-

հիվ ոչ միայն գիտելիքներ են ստանում, այլև փոխանցում մյուսներին:

Հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնի տնօրեն Լիլիթ Մնացականյանն անդրադարձավ նախադպրոցական կրթության ոլորտում երեխաների համակողմանի զարգացման հնարավորություններին, համընդհանուր ներառական կրթության զարգացմանը, խոսեց տարբեր խնդիրների ու խոչընդոտների մասին, միաժամանակ կարևորելով տարածքային հոգեբանամանկավարժական կենտրոնների համագործակցությունը:

«Պետք է ստեղծել այն բոլոր պայմանները, որոնք կապահովեն տարբեր խնդիրներ ունեցող երեխաների զարգացումը», - ընդգծեց նա:

Երևանի և մարզերի նախադպրոցական ոլորտի մի խումբ աշխատողներ շնորհակալագրեր ստացան՝ նախադպրոցական ոլորտի զարգացման գործին ակտիվ աջակցություն ցուցաբերելու համար:

Աշխատաժողովին ներկա էին կրթության տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ, ոլորտի պատասխանատուներ, նախադպրոցական հաստատությունների աշխատակիցներ:

Սիլվա ԱՄՐՅԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ



Աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում էին ՌԴ Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի գիտահետազոտական և նորարարական միջազգային գործունեության գծով պրոռեկտոր Յուրի Վետրովը ու Գիտական վարչության պետ Լյուդմիլա Խլուդովան: ՀՀ-ում Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանի հետ հանդիպմանը

կողմերը քննարկեցին գիտակրթական ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ հարցեր, այդ թվում՝ հաջորդ տարի նախատեսվող ծրագրերն ու իրականացվելիք միջոցառումները: Խոսեցին ուսանողների և դասախոսների փոխանակման, համատեղ կրթական ծրագրեր իրականացնելու, «Ամառային դպրոց» միջազգային ծրագրի շրջանակներում համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

Ռուս գործընկերները կարևորեցին «Ուշինսկու ակումբ» միջազգային երիտասարդական բանավեճի ակումբում ՀՀ-ում ուսանողների ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը:

ՀՀ-ում պրոռեկտորը վստահեցրեց՝ բուհը ուսանողներին է կրթական տարբեր հաստատությունների հետ համագործակցության շրջանակում կարևորում և առաջնահերթություն են համարում ուսանողների ընդգրկվածությունը, անձնային և մասնագիտական աճի զարգացումը:

Կողմերը հույս հայտնեցին, որ համագործակցությունը կլինի շարունակական և երկուստեք արդյունավետ՝ կյանքի կոչելով հուշագրում ամրագրված կետերը:

Հիշեցնենք, որ Մանկավարժական համալսարանի և ՌԴ Արմավիրի պետական մանկավարժական համալսարանի միջև այս տարի կնքվել է համագործակցության հնգամյա հուշագիր:

Մարին ԱՂԵՎՅԱՆ

## Ռազմիկ Կոչեցյանը՝ «Լավագույն հոգեբան ուսանող»

Շուրջ 200 փորձառու և երիտասարդ հոգեբաններ հավաքվել էին մեկ հարկի տակ՝ քննարկելու ժամանակի հոգեբանական հիմնախնդիրները, խոսելու հոգեբանի ծառայությունից օգտվելու կարևորության, այդ մշակույթի արժանատիքներին և այլ հարցերի մասին: Միջոցառմանը մասնակցում էին նաև արցախցի հոգեբաններ:

ՀՀ-ում շրջանավարտ Մարիան Մեհրաբյանի ղե-



կավարժած կենտրոնը հնարավորություն է ստացել անձնակենտրոն ինտենսիվ ծրագրային հոգեբերապիայի շրջանակներում անցկացնել վերապատրաստման գործընթաց:

Ոլորտին վերաբերող գործնական խաղերի ընթացքում Խ. Աբրվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռազմական հոգեբանության բաժնի մագիստրոս Ռազմիկ Կոչեցյանը «Եմպատիայի տարբեր փուլերի զարգացման թեմայով» հետազոտության համար արժանացել է «Լավագույն հոգեբան ուսանող» մրցանակին:

Ռազմիկը կարևորում է հոգեբանի մասնագիտությունը երկրի մարտահրավերներին դիմակայելու գործում, մրցանակն էլ համարում երիտասարդ հոգեբանին զննաստեղծ և ոգևորելու կարևոր գործոն:

## ՆՈՐ ԳԻՐՔ

Լույս է տեսել ՀՀ-ում լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար պրոֆ. Լալիկ Խաչատրյանի մենագրությունը՝ «Հին հայերենի քերականական համակարգի տիպաբանությունը» վերտառությամբ:

Յուրաքանչյուր լեզվի քերականական համակարգի տիպաբանության բացահայտումը տվյալ լեզվի տեսության առաջնությունը հարցերից է: Տիպաբանության հարցադրումը կարևորվում է ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա առումներով, քանի որ լեզվի տիպաբանական բնութագիրը նրա զարգացման տարբեր փուլերում կարող է փոփոխության ենթարկվել՝ լրիվ կամ մասնակի առումներով:

Աշխատանքում քննարկվում են հին հայերենի քերականական համակարգի տիպաբանության խնդիրները՝ ըստ լեզվական մակարդակների: Ձևաբանական մակարդակում քննության են առնվել թվի, հոլովման և խոնարհման համակարգերի, իսկ շարահյուսական մակարդակում՝ նախադասությունների, ներառման ստորադասական կապակցությունների, սպասարկու բառերով կառուցված շարադասական կառուցվածքների տիպաբանության հարցերը:

Հեղինակը հին հայերենի շրջանակներում քերականական համակարգի տիպաբանությունը դիտարկում է երեք՝ պատմական, տարժամանակյա և համաժամանակյա կարգով:


Պատմական հայերենի ձևաբանաշարահյուսական մակարդակների փոփոխությունների ընթացքը 7-13-րդ դարերում՝ հետևե-

լով հետդասական և նախամիջին հայերենի ենթափուլերի լեզվավիճակին: Ըստ այդմ՝ ցույց են տրվել համակարգային այն փոփոխությունները, որոնք արձանագրված են մշակված դարաշրջանների պատմիչների երկերում:

Տարժամանակյա հայեցակետով քննվել է հին հայերենի ձևաբանական և շարահյուսական մակարդակների տիպաբանական հատկանիշների փոփոխությունների ընթացքը՝ ընդհանուր հայերենում, և ցույց են տրվել դրանց (փոփոխությունների) դրսևորումներն արդի հայերենում:

Պատմական կարգով ուսումնասիրվել է հին հայերենի քերականական համակարգը (ձևաբանական և շարահյուսական մակարդակներ) և առանձնացվել ու մեկնաբանվել են լեզվաքերականական այն միջոցները, որոնք ծառայում են մշակված մակարդակների քերականական իմաստներն արտահայտելուն:

Հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ հին հայերենը տիպաբանորեն պատկանում է թեքական կառուցատիպի լեզուների թվին, թեև ունի կցականության որոշ տարրեր: Անշուշտ, այս տեսակետը որոշակի իմաստավորում ունի, եթե հարցը դիտարկում ենք գոյականի հոլովման և բայի խոնարհման համակարգերում, սակայն այդ նույն համակարգերում քերականական իմաստներն արտահայտվում են առավելապես կցականության (մասնիկավորման) միջոցով, եթե անտեսենք քերականական իմաստների արտահայտման այլ միջոցներ ևս, որոնք նույնպես կենսունակ են այդ ոլորտում: Ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում նոր մեթոդաբանությամբ ուսումնասիրել հին հայերենի համաժա-



մանակյա քերականական կառուցվածքը, որոշել նրա տիպաբանական բնութագիրը, ճշգրտել որոշակի հարցեր, որոնք մինչ այժմ անտեսվել են՝ տուրք տալով հին հայերենի քերականական համակարգի ավանդական բնութագրին:

Աշխատանքում փորձ է արվում հիմնավորելու այն տեսակետը, որ հին հայերենի ձևաբանական կառուցվածքը տիպաբանորեն կցական կառուցատիպի է՝ զուգակցված թեքականությամբ, իսկ շարահյուսական համակարգը բավարարում է անվանական կառուցատիպի լեզուների տիպաբանության չափանիշները և բնութագրվում է անվանական կառուցվածքի լեզուների տիպով:

Աշխատանքը կարող է օգտակար լինել բանասիրական ֆակուլտետների ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների, դասախոսների և, ընդհանրապես, բոլոր նրանց համար, ովքեր զբաղվում են հայոց լեզվի պատմության հարցերով:



կյանքին և ոչ խավարին: Սուրեն Դանիելյանն այն եզակի մարդկանցից է, որ հավատամքի նման պահպանում է դասական ուղղափառությունը և անսահման սեր տածում մեր գրականության գոհարների հանդեպ»,-ամփոփում է հայր Զաքարիան:

«Պատահական չէ, որ նման գիրքը հրատարակության է երաշխավորել համալսարանի գիտական խորհուրդը,-ասաց Մանկավարժական համալսարանի ուսումնագիտական հարցերով պրոռեկտոր Մարիամ Իսախյանը: Պետք է նշեն, որ պարոն Դանիելյանը այս ծավալուն մենագրության վրա աշխատել է դժվար ու մարտահրավերներով լեցուն 2019-2023 տարիների ընթացքում»:

Հակոբ Օշականը վաղուց է գտնվում պրոֆեսոր Դանիելյանի գիտական հետազոտությունների դաշտում, ծնվել են գրողին նվիրված բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ՝ սերունդների համար:

Պրոռեկտորն անդրադարձավ մենագրության բովանդակային ու կառուցվածքային ուղղություններին՝ շեշտադրելով կարևոր առանձնահատկությունները:

Իր ջերմագին ողջույններն էր ուղարկել Ամերիկայի Հայ

յուրաքանչյուր ոք կհասկանա այս մենագրության անհրաժեշտությունը, մանավանդ հայաստանյան իրականության մեջ, խորհրդային ժամանակների միակուսակցական վարչակարգի պայմաններում, բազմավաստակ գրողը, գրականագետն ու քննադատը Մերձավոր ու Միջին Արևելքի այդ գաղութներում, մանավանդ Երուսաղեմում, Բեյրութում, Կիպրոսում ու Հալեպում մի քանի սերունդների գրական ճաշակ դաստիարակած, գրական մտքի ընթացքն ուղղորդած, եռանդուն գործիչն ու գրողը տասնամյակներ շարունակ արգելված է եղել զուտ քաղաքական կուսակցական առումով»:

Այսպիսով, երկար ժամանակ ընթերցողը զրկված էր հաղորդակցվելուց նրա փոքր արձակից մինչև մեծ վիպաշարը՝ ասում է գրականագետը՝ ամփոփելով. «Պրոֆեսոր Դանիելյանին հաջողվել է ստեղծել գիտական հարուստ արժանիքներով օժտված այս աշխատությունը, որտեղ նա խորությամբ ուսումնասիրել է գրական-գեղարվեստական-փիլիսոփայական-հոգեբանական ու պատմագիտական հսկայական գրականություն, ու կարողացել է գեղարվեստական պատկերն արժևորել կենսական

## «Հակոբ Օշականը բացել է իմ առջև գրականության նշանակությունը՝ իբրև գերխնդիր, իբրև ճանաչողություն»,-ասում է պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դասիկոմն անցկացվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի «ՕՇԱԿԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՆԻՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ «ՄԱՆՐՈՒՔՆԵՐ» գրքի շնորհանդեսը՝ նվիրված Հակոբ Օշականի ծննդյան 140-ամյակին: Գրքի գրախոսներն են Բ.Գ.Ղ., պրոֆեսոր Լաուրա Մուրադյանը, Բ.Գ., պրոֆեսոր Սամվել Մուրադյանը, ՀՊՄՀ պրոֆեսոր Սամվել Պողոսյանը:

Գրքի շնորհանդեսին մասնակցում էին գրողներ, տարբեր բուհերի, մասնավորապես ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականագետներ, ԿԳՄՍ ներկայացուցիչներ, ՀՊՄՀ դասախոսներ և ուսանողներ, մշակույթի և այլ ոլորտի մտավորականներ:

«Օրեր առաջ մեր մեծագույն արձակագիրներից մեկը՝ Հակոբ Օշականը, դարձավ 140 տարեկան: Հայ մոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը և «Սփյուռք» կենտրոնը որոշեցին Հակոբ Օշականին նվիրել այսօրը: Մյուս առիթը պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի հրատարակած գիրքն է՝ «ՕՇԱԿԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՆԻՆԴԻՐՆԵՐԸ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ «ՄԱՆՐՈՒՔՆԵՐ» վերնագրով միջոցառումն այսպես բացեց այն վարող, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանը:

Մայր աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն հայր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղուսյանի օրհնության խոսքն ավելի քան մերօրյա էր: Հայր Զաքարիան խոսեց մեր օրերում «մտածող մարդու ժգնածամի» մասին, երբ «խավարը փորձում է տիրել լույսին», բայց նման շնորհանդեսները վկայություն են այն բանի, որ մենք ուզում ենք ապրել ու ճանաչել մեր նախնիներին ու մեր ինքնությունը առավել մանրամասն: Օշականագետ Գրիգոր Հակոբյանին աշակերտած հայր Զաքարիան իրեն երջանիկ մարդ է համարում, քանզի իր ուսուցչի միջոցով ծանոթացել է արևմտահայ գրականության այս վիթխարի քրմապետի հետ:

«Եզակի անձնավորություն էր Օշականը՝ իր խառնվածքով, բուռն, երբեմն չհասկացվածությամբ, բայց նաև հետաքրքիր, որը պահանջում է մտքի սևեռվածություն, հոգու ներդաշնակություն, սուզվելու նրա երկերի ծով ալիքների մեջ, բայց այնտեղից հաղթանակած դուրս գալու առավել անրացած ինքնությամբ և հայկականությամբ»:

Ապրելով Սուրբ երկրում՝ կարծում են հասկանալի ու բնական է նրա հոգու խռովքն ու զայրույթը, նրա հոգու թռիչքները, որ մեզ թվում են տալիս՝ հասկանալու հայկականությունը՝ նկատում է հայր Զաքարիան:

«Այս գրքի հրատարակությունը հաղթանակ է, և այն՝



իրողությունների համադրությամբ: Արևմտահայ և սփյուռքահայ գրականության հնուտ գիտակը՝ վաստակաշատ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը, կիրառել է Հակոբ Օշականի երկերը տեսականորեն արժևորելու կայուն համակարգ և գնահատման ստույգ չափանիշներ»:

Ելույթ ունեցավ «Գրական թերթ»-ի խմբագիր Կարինե Խողիկյանը, ում բարեկամությունը Սուրեն Դանիելյանի հետ սկսվել է դասական գրականության շուրջ փոքրիկ վեճով:

«Ես Սուրեն Դանիելյանին համեմատում եմ սահմանի կանգնած այն պահից, որը նայում է, թե Հայաստանի սահմանից դուրս՝ սփյուռքում ինչ է կատարվում»,-նկատում է խմբագիրը, որը սիրով տպագրում է պրոֆեսորի վերլուծական հոդվածները:

ավետարանչական ընկերակցության ղեկավար Զավեն Խանջյանը, որի ուղերձում ասվում էր. «Արևմտահայ գրող, քննադատ, ուսուցիչ Հակոբ Օշականը մեծ երևույթ է մեր գրականության մեջ, որի խոսքը խորունկ և միշտ դիպուկ է եղել: Նման անհատականության ստեղծագործական աշխարհի մեկնությունը ինքնին ենթադրում է արևմտահայ գրականության խոր ծանոթություն և հատկապես Օշականյան աշխարհի հետ մերձեցում»:

Ելույթ ունեցավ ԿԳՄՍ գրահրատարակչության մասնագետ, մեր համալսարանի շրջանավարտ Արմեն Սարգսյանը: Նա գրքի հրատարակությունը համարեց մեր գրաքննադատական մտքի զարգացման, գրահրատարակչության և գրականագիտական մտքի պատմության մեջ մշակակալի գործ, որովհետև այս դժվար օրերին, որը, «եթե համեմատենք լաբիրինթոսի հետ, գրականությունն ասես կողմնացույց լինի, որը մեզ ցույց է տալիս երթի ուղղությունը»:

Ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հերիքմազ Որսկանյանը, որը շնորհավորեց գիտական շքեղ հրատարակության առթիվ: Հակոբ Օշականի ստեղծագործությունների մասին նրա պատկերացումները ձևավորվել են Ներսես Շնորհալու գրականության թեմայով թեկնածուականի վրա աշխատելու տարիներին:

Կարդալով Սուրեն Դանիելյանի մենագրությունը՝ բանախոսը վստահ է՝ պրոֆեսորը կարողացել է հատել ժամանակի սահմանները և բացահայտել «արձակագրի ապրած տառապանքի հայտնությունը»:

«Գիտական հանրության առջև է դրվել խորհայաց մի ուսումնասիրություն, որ առաջադրված է հիմնախնդիրների համակողմանի քննությամբ արժեքավոր է և կունենա հաջորդիվ ուսումնասիրություն, որովհետև գերխիտ է գրականագետի ասելիքը»,-մենագրության բազմազան շերտերի խոր վերլուծությունն այսպես ամփոփեց գրականագետը:

ԵՊՀ Հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ Սամվել Մուրադյանը խոսեց Հակոբ Օշականի համագային մեծ երևույթի մասին, բայց կային ժամանակներ, երբ արևելահայ գրականության մեջ նրա անունը չէր կարելի տալ:

«Հակոբ Օշականի ստեղծագործություններին քիչ թե շատ ծանոթ

խմբագիրը, որը սիրով տպագրում է պրոֆեսորի վերլուծական հոդվածները: Բոլոր ելույթները նվիրված են օրվա թեմային՝ Օշականի ստեղծագործությունների Դանիելյանական մեկնաբանությանը: Այդ տեսանկյունից են ելույթ ունենում ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար աշխատող, Բ.Գ.Ղ. Պետրոս Դեմիրճյանը և ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բաժնի վարիչ, Բ.Գ.Ղ. Սուրեն Աբրահամյանը:

Ելույթի հերթը Բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Տաթևիկ Թամրազյանին է, ով գրական 7 արարով փորձում է ներկայացնել իրենց գրականության դասաժամը:

«Եվ ուրեմն, զրույցի թեման՝ արևմտահայերեն, սփյուռքահայ գրականություն, Հակոբ Օշական: Մեր լսարանում մեկտեղվել են Հայաստանի բոլոր մարզերը, լեռները, դաշտերը, բարբառները, որ արկի համը ունեն: Բոլորը զուլվ են, բոլորը կարկաչուն են: Բայց հայտնի է, որ համանվագը՝ սիմֆոնիան, ներդաշնակ չէ, կատարյալ չէ, եթե ուղղորդող, ղեկավարող և ցամաքի ճանապարհն իմացող նավապետ չունի: Ուղղորդել կարող է միայն նա, ով արդեն իսկ անցել է ճանապարհը, քաջատեղյակ է բոլոր հնարավոր դժվարություններին, գիտի հաղթահարման ձևերը: Եվ ուրեմն, մեզ համար բոլորովին մոր այս հարուստ, գեղեցիկ, յուրօրինակ և այսքան կարևոր ճանապարհի՝ սփյուռքահայ գրականության ղեկը պարոն Դանիելյանինն է: Ուղերձներն անվերապահորեն վստահում են նավապետին»:

Բանասիրական ֆակուլտետի ղեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը ներկայացնում է Սուրեն Դանիելյան մտավորականին, գիտնականին, մանկավարժին, ում մեջ համադրվում են այս բոլոր որակները:

Հանդիսությունն ամփոփում է օրվա «մեղավորը»՝ Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի ակնկալիքներն արդարացան. Օշականը ներկայացված է որպես գրական ճանաչողության մեջ երկու զուգադիր սահմանների մերձեցան հնարավորություն և Հակոբ Օշականի ճանաչողությունը մեր աշխարհում արժանավորելու խնդիր:

«Ահավոր դժվար է երկխոսություն ձևավորելը սերունդների միջև, գրական աշխարհների միջև, մարդկանց միջև»,-ասում է պրոֆեսորը՝ նկատելով, որ «Օշականը բացել է իր առջև գրականության նշանակությունը՝ իբրև գերխնդիր, իբրև ճանաչողություն»:

...Օշականն իսկապես փոխեց մեր պատկերացումների ավանդական կարգը, այսօր նրան ճանաչելու համար պետք է պարզապես կարդալ»:





«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» պաշտոնաթերթի խմբագրությունում է արցախցի Մարիամ Սարգսյանը: Նա Ստեփանակերտի պետական համալսարանի ուսանողուհի էր: Այժմ սովորում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետում:

Մարիամ Սարգսյանը սովորում էր Արցախի պետական համալսարանի Մանկավարժություն և սպորտի ֆակուլտետի «Մանկավարժություն և մեթոդիկա» բաժնում: Հայաստան տեղափոխվելուց հետո նա սովորում է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնում:

Մարիամը ծնվել է մեծացել է Ստեփանակերտում: Ընտանիքի հետ ապրում էր Ստեփանակերտի մի ժայռում գտնվող Կրկնա համայնքում, որը 1990-ականներին գյուղ էր, պատերազմից հետո դարձավ Ստեփանակերտի թաղամաս: Մայրը Մարտակերտից է, հայրը՝ Մարտուկից: Ջանք ու քրտինք էին թափել՝ տարիներով կատուցել սեփական առանձնատուն:

«Սիրուն թաղամաս էր, քաղաքից հեռու, հանգիստ»,- պատմում է Մարիամը՝ հիշողությամբ հետ գնալով ծննդավայր: Քույրը աշխատում էր մանկապարտեզում, մի անգամ այցելել է մանկապարտեզ և տեսել, թե երեխաներն ինչպես են սիրում քրոջը ու որոշել՝ ինքն էլ մանկավարժ կդառնա: Երեխաների հանդեպ մեծ սեր ուներ, նաև ինքն էլ կարծանամար նրանց սիրում... Արցախի համալսարանում մեկ բաժին կար, որն ավարտելուց հետո կարող էր աշխատել և՛ մանկապարտեզում, և՛ տարրական դպրոցում: ՀՊՄՀ-ում այդ բաժիններն առանձին են:

Խոսում ենք ուսուցչի կոչման ու առաքելության մասին: Մարիամը հանգստացել է ուսուցիչ լինելու համար ամենից առաջ մարդ պետք է սեր ունենա երեխաների նկատմամբ, օրինակ ծառայի աշակերտների համար, պետք է լինի ազնիվ, մարդկային բարձր հատկանիշներ ու որակներ ունենա: Հմարավոր է, որ ուսուցիչը բարձր գիտելիքներ ունենա, բայց զիջի մարդկային որակներով... Դա աշակերտին ոչինչ չի տա:

Մարիամի համար մինչ օրս ուսուցչի իդեալն էր ավագ դպրոցի դասուցիչն է, որի շնորհիվ 2020 թվականից հետո շարունակել է կրթությունը: Մարիամը ողբերգական իրադարձություններից հետո այլևս ցանկություն չուներ կրթությունը շարունակել, բայց ուսուցչուհի Քնար Գրիգորյանը պնդեց, որ պետք է շարունակել, դասերից հետո էլ պարապում էր իր հետ: Հենց նրա հուսադրող աջակցության շնորհիվ էլ Մարիամն ընդունվեց Արցախի պետական համալսարան:

Մարիամը հուզմունքը փորձում է թաքցնել և պատմում է ընտանիքի մասին. «Ընտանիքում մենք 6 հոգի ենք, թեև Կոտայքի մարզի Ջրվեժում վարձած տանն ապրում ենք 15 հոգով, բարեկամների հետ: Մոտիկ է Երևանին: Դժվար հարմարվեցինք, ամեն ինչ փոխվել է, այդ թվում՝ առօրյան: Այնտեղ ամեն ինչ հանգիստ էր, թեև միշտ լարվածություն կար: Այստեղ մեծ քաղաք է, աղմուկը շատ է, բոլորն ինչ-որ տեղ են շտապում: Եթե Ստեփանակերտում ավտորուսը բաց էինք թողնում, չէինք անհանգստանում, մտածում էինք՝ քաղաքի մի ժայռից մյուսը ոտքով կես ժամում կգնանք: Այստեղ այդպես հնարավոր չէ»:

Մարիամը չի սիրում հայաստանցիներին ու արցախցիներին իրարից տարբերել, բոլորն էլ հայ են, բնավորությունների մեջ է նկատում տարբերությունները՝ արցախցիներն ավելի կոպիտ են մարդկանց հետ շփվելիս: Հայաստանում մարդիկ քաղցրալեզու են, իրար ավելի մեղմ են վերաբերվում, արցախցիները կոշտ ու կոպիտ են, բայց ամուր ժողովուրդ են: «Եթե մենք կարողացանք այսքանի միջով անցնել ու միասնական լինել, նաև մարդ մնալ, դա խոսում է մեր ամուր կամքի մասին», -ասում է Մարիամը:

Աղջիկը հիշում է 2020 թվականի պատերազմը, ապա շրջափակումը, որոնք ահավոր իրադարձություններ էին և իրենց կյանքը գլխիվայր շրջեցին: Ամեն ինչին հարմարվում էին, վերջում սկսեցին աղ, օճառ պատրաստել: Հայրը առաջին անգամ մեծ թատկա աղ է պատրաստել և ասել՝ ամբողջ ձմեռ կբավականացնի: Աղը թողեցին սեղանին ու դուրս եկան: Ամեն ինչից ելք գտնում էին, որ առաջիկա ձմեռանը դիմանան: Բայց ավելի ահավոր էին պատերազմական օրերը. կապ չկար, չգիտեին՝ հարազատը ո՞րտեղ է, թե՞ մեռած:

Սեպտեմբերյան վերջին պատերազմի առաջին իսկ օրից ընտանիքը ժայռամասից տեղափոխվեց քաղաքի կենտրոն: Եղբայրը, որ բուժեղբայր էր աշխատում, գործից տուն գնալով, տեսավ, որ ընտանիքը տանը չէ: Ուզում էր շանը վերցնել և տանել իր հետ, բայց աղբեջանցիները Կրկնա արդեն գրավել էին, գիշերով մտել

## «Երբ տեսնում ես կյանքի դառնություններն ու պատերազմի դաժանությունները՝ դադարում ես հավատալ հրաշքների, երազանքներ ունենալ», - ասում է արցախցի ուսանողուհին

Էին իրենց հարևանի տուն: Եղբորը տեսնելով՝ կրակ բացեցին, մինչև նա հեռացավ:

Բայց Մարիամը կարողացել է մեկ անգամ տուն գնալ, սեփական տան այգուց հող վերցնել և ծաղիկներ քաղել: Հուզվում է: «Որքան հնարավոր էր՝ շատ հող վերցրի: Ծաղիկները չորացրել ու պահում են: Ճագարներին ու միրհավներին բաց թողեցի, թող ազատության մեջ լինեն»:

Գերմանական ցեղատեսակի շանը թողել են այնտեղ, մեքենայում տեղ չկար... Շունը վերջին օրերին զգում էր, որ մեռել է մնալու, աչքերը տխուր էին...

26 տարեկան եղբայրը բուժեղբայր էր, որի պատճառով մի քանի օր ավել են մնացել Ստեփանակերտում. նա չէր կարողանում թողնել հիվանդներին, հատկապես բեմ-գալցակայանի պայթյունից հետո: Ծանր աշխատանքից նա առողջական վատ վիճակում էր, բայց մնաց մինչև վերջին հիվանդը դուրս գար:

Աղբեջանցիները քաղաքում արդեն շրջում էին, երբ նրանք դուրս եկան:

Հայրը դարբին էր, մայրը՝ բուժաշխատող, երկար տարիներ աշխատում էր ծննդատանը: Հայրն արդեն Հայաստանում շարունակում է իր գործը, մայրը դեռ չի հարմարվում: Քույրերից մեկը մասնագիտությամբ լրագրող է, մյուսը՝ մանկավարժ: Ցավոք, գործ չգտնելու և ընտանիքը պահելու խնդրով պայմանավորված՝ մանկավարժ քույրը տեղափոխվեց Մոսկվա՝ ապավինելով ամուսնու բարեկամների աջակցությանը:

«2020-ին աղոթում էի, որ զինծառայող ընկերոջս բան չպատահի: Հետո, երբ իմացա զոհվել է, աղոթում էի, որ դիակին չկպչեն: 6 ամիս անցավ, և դիակը չէին գտնում, աղոթում էի, որ դիակը գտնեն, որ թշնամու ձեռքը չընկնի... Իսկ երբ գտան, մի տեսակ հանգստացա... Նման իրավիճակներում փորձում են միխթարել քեզ, շնորհակալ լինել», - ասում է Մարիամը:

Մարիամի ընկերը Թալիշում էր կռվում, հետո օգնության գնաց եղբորը և մի քանի ժամվա տարբերությամբ, երկու եղբայր՝ Արթուր և Արսեն Աղասյանները զոհվեցին Մատաղիսում: Երբ հերոսաբար կռվել են, ընկերը՝ Արսենն իր ընկերոջ՝ Տիգրանի հետ երկուսով չորս անգամ գրավում են թողնում են նույն դիրքը: Վերջին անգամ ընկերը զանգել էր հոկտեմբերի 1-ին, նա զոհվեց հաջորդ օրը:

Մարիամի կարծիքով վերբերը չեն բուժվում, մինչև կյանքի վերջը հիշելու են զոհվածներին, իրենց տունը: Հիմա էլ քայլում է Հայաստանի փողոցներով ու մտովի հայտնվում իր ծննդավայր Ստեփանակերտում:

Հարցնում են՝ վերադառնալու հույսը մարտի է... Եթե Արցախը երբևէ էլի հայկական դառնա, ոչ Աղբեջանի կազմում, կվերադառնան: Այդպես են մտածում իսկական արցախցիները: Դրանք այն արցախցիներն են, որոնք բարձրաձայնում են՝ Արցախը եղել է ու կա հայկական, և շարունակում են պայքարել: Իսկ նրանք, որոնք շատ շուտ համակերպվեցին և հողը հետ վերադարձնելու ցանկություն այլևս չունեն, իսկական արցախցիներ չեն: Այսպես է մտածում Մարիամ Սարգսյանը, ում հոր և

մոր ջանք ու քրտինքով կառուցված տունը մնաց որպես լուսավոր հիշողություն: Մարիամի կարծիքով Հայաստանում ապրուստի միջոց չգտնողներն են հեռանում հայրենիքից: Նրա կարծիքով հազիվ թե որևէ հայ չուզի իր երեխաներին հայ միջավայրում մեծացնել ու դաստիարակել:

Հարցնում են երազանքների մասին: Աղջիկը տխուր պատասխանում է՝ 2020 թվականից այլևս երազանքներ չունեն. «Երբ տեսնում ես կյանքի դառնություններն ու պատերազմի դաժանությունները՝ դադարում ես հավատալ հրաշքների, երազանքներ ունենալ»:

Բայց նպատակներ ունի: Առաջինը՝ տուն վերադառնալ: Ապագայում ուզում է երջանիկ ընտանիք ստեղծել և երեխաներին հայ մեծացնել ապահով ու անվտանգ միջավայրում:

Համալսարանում այնքան ջերմ ընդունեցին, մինչև ինչ մտավախություն ուներ, երբ մինչ Հայաստան գալը սոցցանցերում կարդում էր հայաստանցի-դարաբաղցի «հակասական կարծիքների» մասին: Իրեն վատ էր զգում և չէր պատկերացնում, որ Հայաստանում ու մասնավորապես այս բուհում այսքան ջերմորեն կընդունեն իրենց:

3-րդ կուրսի ավագ Արուսի շնորհիվ էլ շուտ հարմարվեցին. նա շատ է օգնում արցախցի ուսանողներին, որոնք կրթությունը շարունակում են մեր համալսարանում: Երկու համալսարաններում էլ խստապահանջ են, դա լավ է, կօգնի լավ սովորել: Բայց Արցախի համալսարանում ուսանողները քիչ էին, և մի տեսակ փոքր ընտանիքում էին բոլորը: Հայաստանցի ուսանողների հետ ջերմ հարաբերություններ են ստեղծվել:

«Մեզ մոտ օղը խոնավ էր, այստեղ օղն ավելի չոր է, - ասում է աղջիկը: - Մեկ էլ այստեղ օրը ուշ է մթնում: Քանի որ մեզ մոտ սարեր էին՝ օրը շուտ էր մթնում: Այդ տարբերությունն էլ են զգում: Մեր բնությունը շատ լավն էր, կանաչը շատ էր»:

Այժմ 15 հոգով, բարեկամներով ապրում ենք Ջրվեժում վարձած 4 սենյականոց առանձնատանը: Եղբայրս հորս հետ է աշխատում, հորս արհեստին էլ է տիրապետում: Իսկ մորս դեռ ժամանակ է պետք: Նա չի կարողանում հաշտվել իրականության հետ. եղածը նա շատ ծանր է տանում, ընկճված է»:

Մարիամը ցանկություն ունի բակալավրիատն ավարտելուց հետո հրուշակեղենի սեփական խանութ բացել, գուցե շարունակի մագիստրատուրան՝ իր մասնագիտությանը:

«Միակ նպատակս այս կյանքում երջանիկ լինելն է: Կյանքը շատ կարճ է և պետք է ապրել: Աշխարհաբաղաբական կյանքի շախմատի գինվորներն ենք, այդ մեծ կյանքում մենք չենք երևում, ցավոք, հզորների համար մարդկային կյանքը ոչինչ չարժե: Կուտակելու մոլուցքը մարդկանց չարացրել է», - ասում է նա:

-Ի՞նչ է խաղաղությունը քեզ համար, -հարցնում են:

-Խաղաղությունը հանգիստ սրտով տանը նստելն ու ընտանիքով թեյ խմելն է, քննարկել՝ ո՞նց անցավ օրը, հանգիստ լինելով, որ սահմանին խաղաղ է, ընտանիքը ապահով է: Երբ գիտես, որ քո երկրի տարածքները պաշտպանված են:

«Ցավոք, մեր կյանքը մնաց 2019 թվականի մեջ: Մեր հուշերն էլ մնացին այդ թվականի մեջ: Մեր երեխաները ժամանակից շուտ մեծացան: Հայթայթած մի կոնֆետը ընտանիքի երեխաները տալիս էին ամենափոքրին:

Մենք այգի ունեինք, մրգեր, բանջարեղեն, մի քիչ էլ այլուր, որով հաց էր թխում մայրս: Երջանակաման ժամանակ, երբ վառելիք չկար, տրանսպորտ չկար, մեկ ժամում ոտքով հասնում էի համալսարան, իսկ հետդարձին հոգնում էի, և ճանապարհը հաղթահարում մեկուկես ժամում: Տուն էի հասնում ու շեմից զգում անուշաբույր մոր թխված հացի բույրը... Հասնում էի և զգում, որ տանն եմ...»

Բոլորս քաղաքի հետ ավելի շատ էինք կապվել, մի տեսակ զգում էինք, որ դա վերջն է: Մենք ամսի 28-ին դուրս եկանք, արդեն շատ քիչ մարդ էր մնացել, մեկ օր ու գիշեր տեղ մեր ընթացքը դեպի Հայաստան...»:

Մարիամը կարծում է, որ իրենց բարբառը մի քիչ կփոխվի, բայց համ ու հոտով է: Բաց չի թողնում պատեհ պահը՝ խոսելու հարազատ բարբառով: Դա հիմա միակ բանն է, որ պետք է պահեն, չկորցնեն: Նաև կարևոր է՝ հույսը չկորցնել:

Տեղեզմանյան ալիքներից մեկում տեսել է իրենց Դոգ անունով շանը և ուրախացել, որ չեն սպանել: Երազում է հետագայում գոնե մեկ անգամ այցելել Ստեփանակերտ ու տեսնել իրենց տունը:



**Լրացավ Սպիտակի երկրաշարժի 35-րդ տարին: Բնության այդ անեղ տարերը կործանեց մարդկային հազարավոր կյանքեր, հիմնահատակ ավերեց բնակելի մեծ ֆոնդ և մնաց մարդկանց հիշողության մեջ որպես ահավոր աղետ... Ստորև ներկայացնում ենք տաղանդավոր գրող, հրապարակախոս, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Վրեժ Սարուխանյանի պատմվածքը, որը համատարած խավարում մի լուսավոր պատում է երկրաշարժի օրերի մասին:**

Ցնցումն այնքան ահավոր էր, որ գրեթե ոչ ոք չգտավ իր առաջին անելիքը... Մի քանի վայրկյանում քաղաքի բարձրահարկերը հավասարվեցին հողին: Պանելների ու բետոնի շինվածքների արանքում կենդանի մնացածները չհասցրին անգամ ճչալ: Գրաշարժ փրկվածները փորձում էին հասկանալ՝ երա՞զ է, թե՞... Ով հասկացավ, սկսեց անգոր գոռալ ու մաքրել աչքերը փոշուց՝ աշխարհի վե՞րջն է: Մաքրում էին, բայց լույս չկար, գերեզմանային խավար էր, հույսն էլ գրեթե մեռած... Միայն թուրքեր անց Արմենը հիշեց, որ ինքը սրճարանում էր, կողքի սեղանին երիտասարդ աղջիկներ էին, ու հանկարծ՝ ցնցում, դողոց, խավար: Ընկած էր մեջքին: Շոշափեց տարածությունը, մի կես մետր բարձրության վրա տանիքի պանելն էր: Մի կերպ սողաց, փորձեց ելք գտնել: Ձեռքն առաջ պարզեց ծշտելու՝ տեղ կա՞ շարժվելու: Ավր ինչ-որ փափուկ բանի դեմ առավ, շոշափեց: Կնոջ ոտք էր, տաք, նույնիսկ երակի զարկը զգաց: Ձեռքը շոշափելով վեր բարձրացավ, հավեց կրծքին, հետո՝ դեմքին:

-Յե՛, ո՞րք ես, թե՞ մեռած,- սարսուռով գոռաց Արմենը և ցնցեց կնոջ դեմքը: Մի քանի վայրկյանից կինը ճչաց. «Էս ո՞ր եմ, ի՞նչ է եղել, դու մա՞րդ ես, թե՞ ուրվական, ինչո՞ւ եմք այս խավարում»:  
Արմենը մոլորովեց՝ ո՞ր ինչուին պատասխանի, ինչպե՞ս բացատրի, որ երկրաշարժից ավերված շենքի առաջին հարկի սրճարանում են: Ինչո՞ւ օգնի կնոջը գոնե փոքր-ինչ սթափվելու մղձավանջից՝ թեև ինքն էլ գրեթե նույն մղձավանջի մեջ է: Հիշեց, իր սեղանին երկու շիշ հանքային ջուր կար, գուցե գտնի: Ձեռքը աջուձախ պարզեց, շշերը չէին կտրվել: Բացեց մեկը, շոշափելով արագ մոտեցրեց աղջկա շուրթերին:

-Քույրիկ ջան, խմիր, մի քիչ սթափվիր, որ հասկանաս ուր ես:  
Աղջիկը մի երկու կում արեց, փոքր-ինչ սթափվեց ու միանգամից զագանի մնան ոռնաց. «Մերոնք ո՞ր եմ, ես վախենում եմ...»:

-Ողբալը չի փրկի, պիտի մի արանք գտնենք, շարժվենք, գուցե վերևում մեր կանչը լսեն,- աղջկան սիրտ տվեց Արմենը: Փորձեց սողալով առաջ գնալ:

-Ես անկարող եմ սողալ, մարմինս չի ենթարկվում ինձ,- կմկմոցով ասաց աղջիկը: Արմենը ձեռքով զգում էր նրա մարմնի դողը ու սարսուռը:

-Լավ, դու բռնիր իմ ձեռքից, ես փորձեմ առաջ գնալ,- հույս տվեց Արմենը: Մի քանի մետր սողացին, դեմը պատ է: Յետո հակառակ ուղղությամբ սողացին: Գետնի և պանելի արանքը ավելի էր նեղանում, իսկ փոշու ծանր հոտը խեղդում էր:

-Մի քիչ ուշքի գանք և ուրիշ ելք մտածենք: Գուցե ինչ-որ չոր բանով պատին հարվածեն, ծայրը վերևում լավի: Մի բետոնի կտոր գտավ, երկար հարվածեց պատին: Երկուսով միասին գոռում էին՝ «Օգնություն, օգնություն»: Ոչինչ չէր լսվում, և լռությունն ավելի ահեղ ու ծանր էր դառնում: Արմենը փորձում էր մղձավանջից հանել աղջկան, բայց հուսադրող ասելիք չուներ:

-Քույր ջան, անունդ ի՞նչ է, ո՞վ ես դու,- փորձեց խոսակցությամբ մեղմել տագնապն ու անորոշ սպասումը:

-Անունս Աստղիկ է, բանասիրական ֆակուլտետի ուսանող եմ,- արցունքների միջից հագիվ խոսեց Աստղիկը: -Ախպեր ջան, բա քո անունն ի՞նչ է, դու ո՞վ ես:

-Անունս Արմեն է, ես ժուռնալիստ եմ,- կողքի շրջվեց Արմենը և հանքային ջրի շիշը կրկին մոտեցրեց Աստղիկին: «Մի քիչ էլ խմիր՝ կոկորդիդ փոշին մաքրվի»:

Աստղիկը դողում էր: Արմենը ավելի մոտեցավ, ձեռքով գրկեց Աստղիկի գլուխը: Արցունքից դեմքի փոշին ցեխ էր դարձել, կոպերն ու թարթիչները հագիվ էին շարժվում: Արմենը թրջեց իր թաշկինակն ու ինչ-քան հնարավոր էր մաքրեց աղջկա աչքե-



### ԼՈՒՅԱՐ ՊԱՆԵԼԻ ՏԱԿ

րը. «Դիմանա՛նք, ոնց լինի՝ մեզ կգտնեն՝ միայն թե հանկարծ պանելը չիջնի»:

Գնարավոր փվածքի սարսափից Աստղիկը պինդ սեղմեց Արմենի ձեռքը ու ակամա զուլիսը դրեց նրա կրծքին: Գույս էր որոնում: Արմենը փոշու կրծքին մի քանի անգամ զգաց արցունքի խոնավությունը: Ժամեր անցան, ոչ մի ծայն չէր լսվում վերևից, փվածքի շերտը հաստ էր: Անորոշության մութ սարդոստայնում թաղտուլ էր հույսը: Կողքերից հողի շերտ չկար, որ գոնե ձեռքերով փորեն... Միակ տարբերակը կարծես թե սպասելն էր, լավ է, որ գոնե երկու շիշ հանքային ջուրը կա, իսկ Արմենի գրպանում՝ ընդամենը երեք շոկոլադ: Անհույս գալարումներից, ցավից ու սարսափի անորոշ տագնապներից, խավարից Աստղիկը հոգնել էր, կոպերը դանդաղ իջան: Արմենը չէր շարժվում, ծախ ձեռքը նրա գլխատակին էր: Աղջիկը թեև հոգնած, բայց համաչափ շնչում էր: Անձանոթ աղջկա ծոցի հաճելի հոտն ու կրծքի տաքությունը Արմենի միտքը մեկ-երկու վայրկյան ակամա շեղեցին: Չհասկացավ՝ խղճահարությունի՞ց էր, գուցե իր մեմալությունը փարատելու անորոշությունի՞ց, ամեն ինչ կորցնելու սարսափի՞ց, թե՞ ինչ-որ անհայտ բանից Աստղիկին համբուրելու ցանկություն ունեցավ: «Դա անպայման հույս, ուժ կտա Աստղիկին»,-ինքն իրեն համոզեց Արմենը, բայց նույն պահին անոթ զգաց, որ ինքն իրեն խաբում է: «Մի՞թե այսպիսի մղձավանջից ու մահվան տագնապից ավելի զորեղ ուժ կա: Բայց այս անօգնական աղջկա անզոր ներկայությունից կարծես ուժեղանում եմ»,-անթափանց խավարում շիկնեց Արմենը և զուլիսն այնքան մոտեցրեց Աստղիկին, որ ավելի մոտիկից զգա կրծքի անդամադրելի բույրն ու ձգող տաքությունը: Պանելի ու կրծքի արանքում գլխատույտ սկսվեց, մի ինչ-որ թաքուն ուժ մեղմում էր մահվան սարսափը: Խավարը լիքն է առեղծվածներով: Միայն ժամեր անց արթնացավ աղջիկը՝ ինչ-որ մեկի ձեռքը իր գլխի տակ: Ամմիջապես հիշեց, չհասցրեց ճչալ ու զուլիսը չհեռացրեց: Չհասկացավ՝ վախի՞ց չհեռացրեց, թե՞ տղանարդու փրկարար մոտիկությունից, գուցե հույսի ջերմությունից՝ կամ... Այդ կամի վրա սիրտն անսովոր խփեց՝ «Չէ, սրտիսփոցը ոնց որ թե մղձավանջից չէր, մի ուրիշ բանից է՝ անձանոթ, անսովոր, բայց երանելի...»:

-Արմեն, սարսափս ոնց որ թե մի քիչ մեղմացել է, միայն թե ահավոր տագնապում եմ՝ մի՞թե չեն հասցնի մեզ կենդանի գտնել:

-Լաց չլինես, որ գոնե կարողանանք վերևից ծայներ լսել,- հույս տվեց Արմենը՝ գրկելով Աստղիկի գլուխը: Մի տաք դող անցավ Աստղիկի մարմնով՝ «Ես ոչ մի տղանարդու այրպես մոտիկից չեմ զգացել. վախից ու տագնապից է, թե՞... Ես ինչ-քան թե կա մղձավանջի մեջ, գուցե նաև լու՛յս էլ կա»: Բայց հասկացավ, որ պանելի տակ անձանոթ տղանարդու շնչառությամբ:

յունը արթնելու ցանկությունն ու հույսը ավելի ուժեղացրեց: Գտնակն թափված բետոնի փշրանքներից ու դեկտեմբերյան ցրտից պաղ հատակը դող բերեց նրա մարմնին: Իրենց վերարկուները հանդերձարանում էին մնացել: Քիչ անց դողն ավելացավ ու խառնվեց անսովոր զգացու-

ղությանը: Խավարի անհայտ լռության մեջ դողահար աղջկա ատամնախփոցը սթափեցրեց Արմենին:  
-Աստղիկ, ուրիշ ելք չկա, ես շրջվեմ մեջքի վրա, դու մի կերպ հարմարվիր իմ մարմնին, որ հատակի բետոնի սառնությունը մարմնիդ չհասնի,- ասաց Արմենը ու զգաց, որ Աստղիկը մթի մեջ շիկնեց, փորձեց հրաժարվել՝ իբր իրեն բեռ չլինելու համար: Արմենը օգնեց: Աղջիկն անսովոր անոթաձայններով պարզապես մտավ տղայի տաք գիրկը: Թեև անթափանց մութ էր, բայց Արմենը աչքերն ավելի լարեց՝ կարծես ուզում էր խավարում տեսնել կուսական կրծքի լույսը, աչքերի փայլը: Տղան փորձում էր իրեն զսպել, բայց մի ներքին երանություն արթնացել էր մեջը: Նա կարողացավ միայն միտքը զսպել, բայց սիրտը ոնց որ թե չի ենթարկվում: Անսովոր զգացում էր, մի՞թե մղձավանջում... Մթի մեջ իրենց շուրթերն իրար երկար չորոնեցին... Սարսափը հրաշքով մի պահ ցնդեց, իսկ պանելի հնարավոր փլուզումն արդեն մոռացել էին: Անհույս խավարում գալարվում էին ու շուրթերով իրար հույս տալիս: Գնարավոր փրկություն էր, հույս, հավատ, սեր: Ու կառչել էին նրանից: Գետնի վրա անխուսափելի: Ոչ մեկը ոչ մի բառ չասաց, այդպես ժամեր մնացին, կարծես մոլորեցնում էին մահվան ուրվականին:  
-Արմեն, ես պանելից էլ չեմ վախենում, միայն թե երկուսով լույսը տեսնենք,- շշմուռ Աստղիկը շատ կամաց, կարծես քիչ այն կողմ իրենց լսող կար:

-Աստղիկ, պանելի տակ ես փրկության լույսն արդեն գտել եմ,- նույն շշուկով պատասխանեց Արմենը: Գետնից արդեն լսելի էր մեզ փրկելու է, մա գորեղ է, մեզ ուժ կտա դիմանալու, մա չի մեռնում:

-Արմեն, պատկերացրո՛ւ՝ մենք փրկվել ենք ու ինչ լուսավոր գավակ ենք ունենալու:

Երկուսով մոռացել էին երկրաշարժն ու պանելը: Արթուն երազի երանության թևերին՝ նրանք արդեն ծննդատան մոտ էին: Արմենը հայրաբար բարձրանում էր ծննդատան աստիճաններով՝ ձեռքին կարմիր վարդերի մեծ փունջը: Աստղիկը նորածնի բարուրը գրկին՝ նորաթուխ մոր հպարտությամբ մոտենում էր Արմենին՝ «Անունը ի՞նչ դնենք: Առավոտյան մա կարթնանա ու զոգողոցով կլցնի մեր տունը, ինչ լուսավոր տուն ունենք...»:

Գտնակն արդեն ցնցումից մի փոքր իջավ, ու ցնդեց երանելի: Երազում արդեն մայրացած Աստղիկը գավակին կորցնելու սարսափից պինդ գրկեց հայրացած Արմենին. «Գոնե այսպես հաղթենք մահին»:

-Մի վախեցիր, փրկվելու ենք, մենք գավակ ենք ունենալու,- հույս տվեց Արմենը՝ լարելով լսողությունը:

-Եթե մեզ չգտնեն, գոնե մի քանի օր էլ անիծյալ պանելը չիջնի: Ես պանելի տակ մի ամբողջ կյանք ապրեցի: Դա, Արմեն, արդեն քանի՞ օր է...

-Ոնց որ թե երրորդ օրն է: Գրպանիս վերջին՝ երրորդ շոկոլադը կեր, ուժերդ հավաքիր, դիմացիր, մեզ փրկելու եմ:  
Աստղիկը երրորդ շոկոլադը կիսեց, գրեթե զոռով կեսը դրեց Արմենի բերանը: Չժամանցին, որ քաղցրությունը երկար մնա:

Գտնակն արդեն կրկին ցնցվեց ու մի քանի սանտիմետր էլ իջավ: Գույսի թելը բարակել էր և ուր որ է կտրվելու էր: «Մի՞թե մեր լուսավոր երազը կմնա սառն ու անշունչ պանելի տակ, մի՞թե մեր փոքրիկն չենք տեսնելու, մի՞թե...»,- գրեթե հուսահատ դողում էր Աստղիկը: Կրկին մոայլվեց լռությունը ու պանելից ավելի ծանր դարձավ: Մի՞թե պանելի վերևում կյանք չի մնացել:

-Աստղիկ, վերևից փրկարարների շան հաչոց եմ լսում, մա մեր հոտն առել է, մի քիչ էլ դիմացիր,- հանկարծ ճչաց Արմենը: Քիչ հետո փրկարարների ծայները լսվեցին՝ «Էեե՛, եթե ողջ եք, մի քիչ դիմացեք»: Անակնկալ փրկության հույսը կարծես երազ էր, կարկամել էին, վախենում էին գոռալ, որ հանկարծ չցնդի երազը՝ գոնե մի քիչ էլ այդ հույսի մեջ ապրեն: Բայց վերևի ծայներն ավելի ուժեղացան, և փրկարարների գործիքի զգույշ հարվածից մի փոքրիկ անցք բացվեց: Լույսը ներս խուժեց, ու անցքը մեծանում էր: Գետնի վերևից մեկը գոռաց՝ «Ձեռքդ տու՛ր»:

-Աստղիկ, առաջ դու գնա, ձեռքդ անցքից պարզիր,- ասաց Արմենը՝ իրելով Աստղիկին դեպի փրկարար անցքը:

Երկու հոգի ուշագնաց Աստղիկին դուրս քաշեցին, դրեցին պատգարակին: Շպաթագնության մեքենան անմիջապես տարավ մոտակա որևէ սանիտարական վրան: Փրկարարները փորձեցին անցքը լայնացնել: Ցնցումից հանկարծ պանելը մի քանի սանտիմետր իջավ, շարժվելը գրեթե անհնար էր: Մետաղե հեմակներ իրեցին պանելի տակ, որ լրիվ չիջնի: Անցքը շատ էր նեղացել, հնարավոր չէր դուրս քաշել Արմենին: Մուրճով ու կացնով պանելի եզրը մի փոքր կտրեցին: Արմենը մի կերպ ձեռքը անցքից պարզեց փրկարարներին:

-Էդ կնոջը տեղ չտանե՛ք,- գոռաց Արմենը պանելի տակից:

Մի քանի րոպեից Արմենին մի կերպ դուրս քաշեցին պանելի տակից, ու նույն պահին էլ մետաղե հեմակները ծալվեցին: Պանելը մի վայրկյանում շրխկաց հատակին:

-Ու՛ր է այն կինը,- հագիվ շշմուռ Արմենը:

-Նրան ուղարկել ենք վերակենդանացման, գուցե մայրաքաղաք կտեղափոխեն կամ էլ Դայաստանից դուրս,- հանգստացրեց փրկարարը:

-Հիմա ո՞րն է, հասցե՞ն ասե՛ք,- թախանձանքով խնդրեց Արմենը՝ հրաժարվելով պանելի պատգարակին:

-Ախպեր ջան, էս քաղաքում հիմա հասցե չկա, ավերակների կույտ է,- բացատրեց փրկարարը:

-Ինձ մի՛ տարե՛ք, պանելներից ես անհասցե պանելին, մա անպայման տուն կվերադառնամ,- համառեց Արմենը:

-Նա քո կի՞նն է, հետո որոնող ծառայությունով կգտնես:


-Այո՛, իմ կինն է, բայց ես նրա ազգանունն ու հայրանունը և նախկին հասցեն չգիտեմ: Նա էլ միայն անունս գիտի:

-Փրկարարները տարակուսանքով իրար նայեցին՝ «Քանի՞ տարվա ամուսիններ եք, ու՛ր և ե՞րբ եք ամուսնացել»:

-Երեկ ենք ամուսնացել, պանելի տակ...  
Դեկտեմբերյան սառը օդում արցունքի մի քանի կաթիլ ծաղկեցին արևի ջերմությամբ և փշրվեցին պանելի սառը բետոնին: Քիչ հեռվից մի ծայն սրատեց լռությունը՝ «Արմեն, մենք լույսը տեսա՛նք»...

Փրկարարները պատգարակով Աստղիկին էին բերում: Բոլորը անշարժացել էին: Թեև երեք օրում վիշտը քարացել էր բոլորի դեմքին, բայց մի թեթև ժպիտ խառնվեց օրվա ցավին ու հոսեց նաև պանելի տակ:

Իսկ պանելի տակից Լույս էր բարձրանում...



# «ԽԱԶԻՍԱՐ-ՉԱՐԴԱԽԼՈՒԻ ԷԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ»

Ընդունված հայտնի ճշմարտություն է, որ յուրաքանչյուր ժողովրդի գոյատևման և իմաստության առիակատյան ազգային կենսակերպի պահպանման ստույգ առաջնահերթությունն է՝ կարևոր մի հանգամանք, որի բացակայության պայմաններում արթնանում է ժողովրդի ինքնագոյատևման և սեփական ճակատագիրն անսանձ ձևով տնօրինելու բնագործ:

Արտաքին անողորմ մարտահրավերների մերօրյա պայմաններում, երբ նորից էլ ավելի մեր ժողովրդի ֆիզիկական հարատևման և հայոց պետականության պահպանման կենսական խնդիրը, էլ ավելի հրամայողական ու ստիպողական է դառնում ազգային արժեքների վերահաստատվողումը և գործադրությունը: Այդ առումով էլ ավելի է կարևորվում հատկապես պատմական Հայաստանի հատվածական մասերի՝ աշխարհների, գավառների, վարչատարածքային միավորների, քաղաքների, գյուղերի պատմության նորոգի և ամբողջապես ուսումնասիրումը, մեկնաբանումն ու գնահատումը, քանզի այն ունի ինչպես գիտագործնական և տեսական, այնպես էլ քաղաքական այսօրվան հրատապություն: Այն մի կողմից բացահայտում է մեր հայրենիքի այս կամ այն տարածաշրջանի, կամ բնակավայրի ամբողջական, կամ մասնակի ժամանակատեղի պատմական զարգացման յուրօրինակ ընթացքը, իսկ մյուս կողմից ուղեկցում է դառնում պատմագիտական մտքի հետագա առաջընթացի համար:

Մայր աթոռ ս. Էջմիածնի տպարանը հեղինակային հրատարակությամբ, լույս է ընծայել պատմական գիտությունների դոկտոր, Խ. Աբովյանի անվան ՀՀԿՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Վանիկ Հրանտի Վիրաբյանի «Խաչիսարի (Չարդախլու) հերոսական պատմությունից» մենագրությունը (Երևան, 2022, 128 էջ): Գիրքը տպագրվել է Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԳՊԿ-ի թեմատիկ «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)» ծրագրի շրջանակներում:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր հետազոտողի համար Հայաստանի այս կամ այն շրջանի կամ բնակավայրի մասին աշխատություն գրելն ունի ինչպես իր ոլորտին, այնպես էլ բարդ կողմերը: Դյուրին՝ այն առումով, որ հրատարակի վրա առկա պատմագիտական ամհրաժեշտ գրականության, պարբերական մամուլի և արխիվային փաստագրերի ուսումնասիրման ու համապատասխան շարադրանքի սկզբունքով կարելի է ներկայացնել հետազոտության խնդիր դարձած բնակավայրի պատմությունը: Եվ բարդ՝ այն առումով, որ մասնա-

տիպ աշխատությունները պետք է գրված լինեն քննարկվող դարաշրջանի դեպքերի ու իրադարձությունների ամփոփական առձայնությամբ և չունենան միտումնավորություն:

Չկեղծելով և ճշմարիտ ներկայացնելով հայրենի գյուղի բազմադարյան պատմությունը՝ Վ. Վիրաբյանին կարծես թե հաջողվել է շրջանցել այդ դժվարությունները և պատմական կտավի վրա ընթերցողի սեփականությունը դարձնել հայկական Ուտիք աշխարհի Գարդանք գավառի Շամբոր բնակավայրի մտակայքում գտնվող հայտնի Խաչիսար-Չարդախլու պատմական գյուղի պատմությունը, ուսումնասիրություն, որը կարող է դառնալ մնայուն:

Պատմաբան-հնագետների, միջազգայնագետների և ընթերցող լայն հասարակացության համար նախատեսված ուշագրավ մենագրության մեջ հեղինակը հաջողությամբ և նոր մոտեցումներով կարողացել է վեր հանել հայրենի գյուղի ակնառու դերը հայ ազգային հերոսապատման տարեգ-

րության մեջ: Նախնայաց ավանդույթներին համահունչ գիրքը հեղինակը նվիրել է իր պապի՝ Չարդախլուեցի կուսակցական-պետական գործիչ Հարություն Նահապետի Վիրաբյանի պայծառ հիշատակին:

Վ. Վիրաբյանն աշխատությունը ստորաբաժանել է երեք գլուխների, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է Չարդախլուի դարավոր պատմության այս կամ այն ժամանակաշրջանի իրադարձությունների լուսաբանմանը:

Աշխատության ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են գյուղի նախապատմությունից մինչև 1980-ական թվականների հայ ազգաբնակչության բռնազաղթը:

Վ. Վիրաբյանի գնահատելի աշխատությունը գյուղի պատմության առաջին, ամբողջական և նորոգի վերլուծությունն է, որտեղ հետազոտվող հիմնախնդիրները դիտարկվել են պատմական անժխտելի և համոզիչ փաստերի՝ արխիվային սկզբնաղբյուրների, փաստաթղթերի ժողովածուների, վիճակագրական նյութերի, հուշագրությունների, պատմագիտական գրականության, պարբերական մամուլի մանրակրկիտ տվյալների պատմաքննական, պատմահամեմատական, ժամանակագրական և բնագրային քննախույզ վերլուծությունների ուսումնասիրման մեթոդաբանությամբ: Մենագրությունը կարծես թե պատմագիտական պիրկ և տպավորիչ մի ապտակ է աղբյուրաբանական և թուրքական պատմագրության այն ներկայացուցիչներին, ովքեր հետապնդելով քաղաքական կեղծ նպատակներ և առաջնորդվելով ազգայնականության դիրքերից, փաստերն աղավաղելու յուրօրինակ սկզբունքով և կեղծ նկրտումներով փորձում են անտեսել, աղավաղել և նենգափոխել Ուտիք աշխարհի հայկական բնակավայրերի և մասնավորապես՝ Խաչիսար-Չարդախլուի իրական պատմությունը:

Մեծ հետաքրքրություն և ուշադրություն են ներկայացնում աշխատության մեջ տեղ գտած Խաչիսար-Չարդախլուի նվիրված արժեքավոր լուսանկարները և գյուղի 213 զինվորականների հավելված-անվանացանկը:

Որպես վերջաբան՝ նշենք, որ Վ. Վիրաբյանի՝ հայրենի գյուղի նկատմամբ տածած սաստիկ բարձրագույն գրված ուսումնասիրությունն աչքի է ընկնում գիտատեսական բարձր մակարդակով: Այն չափանիշային առումով ընդունելի է, ունի հրամայական ուղղվածություն, օգտակարության մեծ գործակից և բովանդակային առումով լրացնում է պատմագիտության և երկրագիտության մեջ առկա բացը, որի համար այն արժանի է դրվատանքի:

**Ավետիս ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
Պատմական գիտությունների թեկնածու,  
Խ. Աբովյանի անվան ՀՀԿՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր

## ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ

Արտասահմանյան գրականության երկրպագուներն այսուհետ կարող են հայերեն ընթերցել ֆրանսիացի գրողներ Պոլ Էյուարի «Ցավի մայրաքաղաքը, որին հաջորդում է Սեր պոեզիա»-ն գիրքն ու Բորիս Վիանի «Բոլոր մեռյալների մաշկը նույնն է» վեպը:

Գրքերի շնորհանդեսը տեղի ունեցավ դեկտեմբերի 11-ին Հայաստանի գրողների միությունում:

Գրքերը ֆրանսերենից հայերեն է թարգմանել ֆրանսահայ բանաստեղծ, արձակագիր, իրավաբան, գրական, ազգային և հասարակական գործիչ, Մարսել քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հայկական վարժարանի տնօրեն Կարեն Խուրշուդյանը, որը ներկա էր շնորհանդեսին և ներկայացրեց գրքերի թարգմանության իր նախապատմությունը:

«27 տարեկան էի, արագընթաց գնացքով գնում էի Փարիզ, լսելով Ազնավուրի «Մեռնել հանուն սիրո» երգը, իմ ճանապարհորդության մթնշաղին իմացա Գաբրիել Ռուսիեի ողբերգական պատմությունը և արձագանքը Ելիսեյան պալատում նորընտիր նախագահ Ժորժ Պոմպիդուի, ով մեջքերում է մի հատված Պոլ Էյուարի՝ հասարակական կարծիքը տապալող բանաստեղծությունից, որը գրվել էր 1944 թվականին՝ ի պաշտպանություն սափրված գլուխներով կանանց: Լինելով դիմադրության շարժման խորհրդանշական կերպար և գրելով այս բանաստեղծությունը՝ Պոլ Էյուարը լինելով մտքի մի հոսանքի մաս, հակասում է ընդհանուր հասարակական զգացողությանը: Նվաստացմանը բանաստեղծի հետ միայն Սարտրը և որոշ մտավորականներ ընդդիմացան: Ազատագրման ժամանակ մարդիկ տարիներ շարունակ պարզապես ապրել էին դատաբանություններ և անողոր չէին գցում նրանց վրա, որոնք համարվում էին մեղավորներ: Միայն հետահայաց մայելով և ժամանակի ընթացքում ընձեռնված հանգստությամբ է, որ հասարակությունը այս կանանց նկատմամբ ավելի ներողամիտ կգտնվի՝ կան կհամարի որպես միամիտ սիրահարներ, կամ պատերազմի պարզ զոհեր: Բանաստեղծն ազատագրմամբ ոգեշնչված՝ անարդարության և անզորության ճիրաններում գտնվող կանանց հալածանքներին նվիրված իր ստեղծագործությունը պետք է ընդգծեր այս նախադասությամբ. «Այն ժամանակ, որպեսզի չպատժեն մեղավորներին, դաժանության արժանացրին աղջիկներին: Սափրեցին մինչև իսկ նրանց գլուխները»:



Պատմության մի տխուր էջ... Հայ գրականության ներկայանկուն պակասում էին այսուրեքալիստական ստեղծագործությունները, ձեռնամուխ եղաթարգմանել՝ բառացի

հավատարիմ մնալով բնագրին ու բանաստեղծի ներաշխարհին: Իր խոսքում լիցքավորված մաքրությամբ ու հուզիչ միանությունամբ է բանաստեղծը նկարագրում երազային աշխարհը, որտեղ սիրո զովեստը նույնպես ամենուր է: Վերջապես, երբ եվրոպան շղթայված էր, Էյուարը գրեց.

«Եվ մեկ բառի կարողությամբ Վերսկսում են կյանքս նորից, Օնվել են, որ քեզ ճանաչեն, Քեզ անվանեն Ազատություն»:

Այս բառը ներառում է աշխարհի բոլոր ապրումները, ըստ իս, այն գլխավոր իրողությունը, որ ես սիրում եմ Ֆրանսիան...

Բորիս Վիանի և նրա ստեղծագործական գործունեության վերաբերյալ ինձ ոգեշնչեց իմ գրչակից ընկեր Անուշ Վարդանյանը: Ասելով, որ Բորիս Վիանի ստեղծագործությունները կհետաքրքրեն մեր հանրությանը: Իսկ ես էլ ընտրեցի XX դարի ամենականգալային «Բոլոր մեռածների մաշկը նույնն է» դեպքերի վեպը, որը գրվել է 1946 թվականին Բորիս Վիանի կողմից՝ Վերնոն Սյուլիվան կեղծանունով: Վեպին հետևում է Շներ, կիրք և մահ (Նովել) վիպակը, որը ձեզ ծարավ է թողնում, Բորիս Վիանի գրչի համաձայն, և այնպես վարվում մի ողորմելի պատմվածքի հետ, որտեղ պատմողը մահապատժի հարվածի տակ կրում է իր չգործած հանցագործության ծանրությունը: Իր ամենադժվար հայտարարելու համար միակ վկան այն մեղավորն է, ով հենց նոր մահացավ՝ չհասցնելով որևէ տեղեկություն հաղորդել, որը պետք է հանգեցնի գործի որոշ գորշ հատվածների պարզաբանմանը...

Վերջաբանում հեղինակն անդրադառնում է «Կգամ կթքեն ձեր գերեզմաններին» վեպի քննադատներին: Իսկ միտքն ուղերձն է հանրությանը՝ ապրել հարիր իր ներաշխարհին, ծագմանն ու ինքնությանը, ինչպես նաև՝ դիսկրիմինացիա ախտի ազդեցությունն ու հետևանքները հասարակական կյանքում, քանզի հերոսը՝ Դենը, ում համար իր ծագման գաղտնիքը դանդաղ սրի պես կախված է գլխին, և ողջ գոյությունը հենվում է այս գաղտնիքի վրա: Նրա եղբոր՝ Ռիչարդի խռովությունը, որը սպառնում է բացահայտել ամեն ինչ, միևնույն ժամանակ, նաև նրա հանկարծակի գայթակղումը և մարմնավաճառների կողմից, գլխի վայր շուռ է տալիս նրա՝ խառնածոնի կյանքը: Նա տեսնում է, որ իր կյանքը փոխվում է: Նա, ով առանց խոճի խայթի, այլընտանջատ էր ուզում սպիտակամորթ լինել, մի՞թե հոգու խորքում ընդամենը մի «մեզր» էր...», -գրում է Կարեն Խուրշուդյանը:

**Հ.Գ. Դեկտեմբերի 18-ին Կարեն Խուրշուդյանը հանդիպեց Բանասիրական ֆակուլտետի ուսանողների հետ: Գրական հանդիպումը ապագա բանասերների համար օգտակար էր և շատ ուսանելի:**

ԱՊԱԳ-Ա ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Ուսումնական պրակտիկա «Կենտրոն» հեռուստաընկերությունում

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներն ուսումնական պրակտիկան անցան Կենտրոն հեռուստաընկերությունում: Մեկ ամիս շարունակ նրանք հնարավորություն ունեցան ծանոթանալու հեռուստաընկերության կարողություններին, հաղորդումների պատրաստման գործընթացին, միջմասնագիտական համագործակցության սկզբունքներին և այլն: Ուսանողուհի Սուսաննա Ներսեյանը ոգևորությամբ է պատմում իր տպավորությունների մասին. «Ես հաճախում էի առավոտյան ծրագրի նկարահանմանը, որի ժամանակ հստակ հասկացա լրագրող և հաղորդավար լինելու իրական տարբերությունները, յուրաքանչյուր մասնագիտության առավելություններն ու թերությունները: Ամենակարևորն այն էր, որ ես վերջապես կարողացա հասկանալ ինչ ուղղությամբ եմ սկսելու մասնագիտական կարիերան»,-նշեց նա:

Սերինե Շաղոյանն այդ մեկ ամիսը եղավ սպորտային լրագրության մեջ. «Թեպետ, համալսարան ընդունվելիս արդեն գիտեի՝ ինձ որ ոլորտում եմ պատկերացնում, այս ընթացքում համոզվեցի, որ ճիշտ ճանապարհի վրա եմ. մենք նկարահանող խմբի հետ եղանք տարբեր սպորտային խաղ-մրցույթների, հասկացանք լուսաբանման առանձնահատկություններն ու նրբությունները, հավանական ռիսկերը»:

Լրատվական բաժնում իր պրակտիկան անցկացրեց Անահիտ Ստեփանյանը, որը մեծ ոգևորությամբ է պատմում ձեռք բերած փորձի, լրագրող լինելու առավելության ու տպավորությունների մասին. «Ամենատպավորիչն այն էր, որ մենք ունեցանք հնարավորություն ռեպորտաժներ պատրաստելու, նկարահանումների ժամանակ մեզ նույնիսկ հյուրասիրեցին, երբ ռեպորտաժ էինք պատրաստում Հայաստանում թխվող ժենդայնով հացի մասին: Շատ պատասխանատու ու բարդ աշխատանք է, բայց ամենակարևորն այն է, որ լրագրող պետք է շատ լավ պատկերացնի այն ոլորտը, որում աշխատում է»:



Ուսանողուհի Շողեր Ստեփանյանն էլ ընդգծում է. «Ամենակարևորն այն էր, որ մեր առաջարկած յուրաքանչյուր հետաքրքիր միտք իրականություն էր դառնում «Կենտրոն» հեռուստաընկերությունում: Չկային մտքի սահմանափակումներ, ազատ էինք թեմայի ընտրության հարցում և ողջ աշխատանքը կատարում էինք ինքնուրույն՝ մասնագետի օգնությամբ»:


Մյուս ուսանողները ևս ընդգծում են, որ շատ կարևոր են նմանատիպ փորձաշրջանները, որով հետև ախտաբանական փոփոխությունները հնարավորություն են ունենում:

«Միակ վատ բանն այն էր, որ շուտ վերջացավ պրակտիկան», - գրույցն ավստանքով ամփոփեցին ապագա լրագրողները:

Սյուզաննա ԽՈՒՍՏՅԱՆ  
Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Բիզնես՝ գաղափարով

Մասնագիտությամբ ծրագրավորող Լիդա Քերոբյանի արվեստը դեռ մանկուց է հետաքրքրել, որը հասուն տարիքում վերածվել է գարդարվեստով զբաղվելու:



Անուշաբույր մոմեր, օճառներ և փայտյա զարդեր պատրաստելիս Լիդա Քերոբյանը հաճույք է ստանում: Առանձնակի կարևորում է միջավայրը, որում ստեղծագործում է, քանի որ հենց դրանից է ոգեշնչվում:

«Ոգեշնչման աղբյուր կարող է լինել ինչպես մեղրահամ թեյը, այնպես էլ դառնահամ սուրճը, ամենատարօրինակ ու տարբեր իրավիճակները», - մեզ հետ զրույցում նշում է Լիդան:

Ստեղծագործողը հիշում է իր առաջին աշխատանքներն ու մանրամասնում, որ կիրտոնից ականջօղեր պատրաստելու մասին թեյ խմելու ընթացքում է մտածել և միանգամից գործի անցել. դրանք հիմա զարդերի շարքում ամենամեծ պահանջարկն են վայելում:

Լիդան նշում է՝ զարդեր պատրաստելը ժամանակատար էր, վաճառքից ստացված հասույթը՝ չգոհացնող, սակայն համոզված է, որ դժվարություններ կան ցանկացած սկսնակ բիզնեսում: Կարևորն այն է, որ Լիդա Քերոբյանին դա ո՛չ վախեցրել է, ո՛չ հուսալքել:

«Աշխատանքս ինձ միայն ուրախություն ու հաճելի պահեր է պարգևում: Սկզբնական շրջանում դժվարությունները հիմնականում նյութերի սակավությունն ու բացակայությունն էր իմ բնակավայրում, բայց հիմա արդեն գիտեմ՝ ինչ չափաբաժիններով գնեմ, որ չպակասեն», - ընդգծում է Լիդան:

Էջի «Pluto»-ի գործունեությամբ տարիներ առաջ է սկսել զբաղվել: Այսօր արդեն հետևողներին նոր ու բազմազան տեսականի է առաջարկում: Մոմերն ու օճառները հեղինակի աշխատանքում նորություններ են, որ արդեն հասցրել են մեծ հետաքրքրություն առաջացնել գնորդների շրջանում:

Ձրույցն ամփոփելիս Լիդան ընդգծեց՝ բիզնեսում ֆինանսական ներդրումները պարտադիր են, սակայն գաղափարական ներդրումները հաճախ ավելի մեծ դեր են ունենում:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ  
Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Ծանոթացան իրենց իրավունքներին...



Երևանի N 117 մուլտի-մանկապարտեզում, մախապրոցական կրթության համալիր ծրագրի պահանջներով, տարվա ընթացքում կազմակերպվում են տարատեսակ պարապմունքներ՝ «Իմ ընտանիքը», «Ո՞վ եմ ես», «Միջավայրի պահպանում», «Երկիր մոլորակը» թեմաներով: Գիտելիքների կուտակած պաշարը սեփական իրավունքների մասին ամփոփեց «Իմ իրավունք»

թիվ օրինակելի պարապմունքը, որի նպատակն էր սաների մեջ ձևավորել ինքնուրույն որոշում կայացնելու, կարևորն ու երկրորդականը տարբերելու կարողություն, զարգացնելու երեխաների՝ քերականորեն ճիշտ, կապակցված խոսքը, հարստացնելու բառապաշարը:

«Ի՞նչ է հարկավոր ապրելու համար, ինչպիսի՞ն կցանկանայիք տեսնել ձեր շրջապատը, մանկապարտեզը, տունը, բակը, ովքե՞ր են մեզ շրջապատող մարդիկ, որոնք ցանկանում են մեզ օգնել, ինչո՞ւ ենք ընկերություն անում և այլն. զրույց-պարապմունքի ձևաչափում ավագ բխման սաներն ու դաստիարակը խոսեցին այս և կարևոր այլ թեմաների մասին:

Երանց ներկայացրին իրենց նախասիրությունները, անդրադարձան մարդու իրավունքներին՝ կյանքի, առողջության, կրթության, մեծ ընդգծեցին՝ իրենցից յուրաքանչյուրն առանձնահատուկ է, ունի իր հիմնական կարիքները՝ գոյությունը պահպանելու, զարգացնելու համար:

Երաժշտության մասի պատասխանատու Արուսյակ Բաղդասարյանի օգնությամբ միջոցառումն ուղեկցվեց թեմատիկ երգերով, պարերով, ուսուցողական խաղերով. մանկապարտեզի սաները գեղեցիկ ու ճանաչողական «թռիչք» ունեցան օդապարիկով, բացահայտեցին մեր երկրի տեսարժան վայրերը:

Սնունդ, ջուր, հագուստ, դեղորայք, և, իհարկե, ամենակարևորը՝ ընկերություն. ավագ բխման սաներն անսպասելի վայրէջք կատարեցին՝ օդապարիկում թողնելով կյանքի համար ամենաանհրաժեշտն ու կարևորը:

«Երեխաներ, զրույցի և խաղի միջոցով կարծես որոշեցինք սննդի ու ջրի, օթևանի, մաքուր միջավայրի, կրթության, ընկերության ձեռք իրավունքները», - նշեց դաստիարակ Եվգենյա Իսկանդարյանն ու հիշեցրեց՝ եթե յուրաքանչյուրն օգտվի իր իրավունքից, ավելի կուժեղանա. լինելով ուժեղ՝ կունենանք մեծ հզոր հայրենիք:

Երևանի N 117 մուլտի-մանկապարտեզի մեթոդիստ Սվետա Վարդանյանը, ամփոփելով միջոցառումը, կարևորեց թեմայի ընտրությունը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր երեխա պետք է իմանա իր իրավունքները, իսկ ծնողները նրանց այդ հարցում աջակցեն: Նա վստահեցրեց՝ մանկապարտեզի սաները խաղի միջոցով ամեն օր են սովորում. մնացյալ պարապմունքներն էլ նույնքան հազեցած են, ուսուցողական և ոգևորող:

Մարին ԱՂԵԿՅԱՆ